

ԳԻՐԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Մեծ ուրախութիւն և մեծ հրճուանք է ունենալ 1500-ամեակ մի այնպիսի հրաշագեղ գործի, ինչպէս է տառերի գիւտը։

Դա նշանակում է՝ ունենալ ազնուագոյնը և հզօրագոյնը այն զէնքերից, որ կարող է ունենալ մարդկութիւնը իր ձեռքին իր անդադար առաջադիմութեան համար։

Բայց միևնոյն ժամանակ մի տըրտմութիւն և մի վիշտ պատում է մարդուն, երբ նկատում է, որ հայ մարդը պատմական ձախորդ հանգամանքների շնորհիւ անկարող է եղել օգտվել զրերի գիւտից այն չափով, որ նա այսօր լինէր հաւասար առաջնակարգ քաղաքակիրթ մարդկային համայնքների հետ։

Տասնեհինգ դար սրանից առաջ գիրը շնորհվեց հայութեան, բայց նա մինչև այսօր միայն մասամբ դարձաւ ժողովրդական սեփականութիւն, իոկ հայութեան ստուարագոյն խաւերը անմասն են մնացել զրի վերանորոգիչ և բեղմնաւոր ազդեցութիւնից։

Ա. Մեսրոպի սքանչելի գիւտը այսօր, տասնեհինգ դարերից յետոյ, մի պատգամ է դնում մեր սերնդի առաջ—ամեն ճիգ թափել դարձնելու գիրը ժողովրդական, յանձնելու այդ զէնքը ազգային ընդարձակ խաւերին իրեն ուժեղ կենսական մի գործօն, ճանաչելու նրան նոյնպէս անհրաժեշտ և էական, ինչպէս հանապազօրեայ հրա ուտեւթքը։

Գիրը զէնք է գործնական կեանքի համար, գիրը միջոց է մտաւոր առաջադիմութեան համար, գիրը գործօն է բարոյական զարգացման և կատարելութեան համար։

Գիրը, այդ հրաշագործ երկնառաշնորհը՝ զօրութիւն և կեանք է ժողովրդի համար։

Գիրը—ժողովրդին։

Ահա նշանաբան առաջիկայի համար։

Ա. Քալանթար